

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԿՈՐՑՆՈՒՄ Է ԻՐ ՀՈՂԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՆՈՐՀԻՎ (2012Թ.)

Վիկտորյա Բուռնազյան

Ամեն հինգշաբթի ՀՀ կառավարությունը բերրի հողերը տալիս է կառուցապատողներին, ընդերքօգտագործողներին՝ փոխելով գյուղատնտեսական նշանակության հողերի կատեգորյաները: Միայն պաշտոնական տվյալներով մեր գյուղատնտեսությունն ամեն տարի կորցնում է մոտ 8000-10 000 հեկտար հող: Համապատասխանաբար, նույն չափով ավելանում են արդյունաբերական, էներգետիկ եւ այլ նշանակության հողերը:

Հողերի յուրացում

2011թ. ապրիլի 21-ին հասարակությունն անակնկալ ստացավ կառավարությունից: Հողերի կատեգորիայի փոփոխումը հեշտացնելու համար կառավարությունն ընդունեց 558-Ն որոշումը (<https://www.e-gov.am/gov-decrees/item/19500/>), ըստ որի՝ ընդերքօգտագործման ոլորտում գործող տնտեսավարող սուբյեկտներն առանց ավելորդ վարչարարության եւ ժամանակի կորստի կարող են նպատակային այլ նշանակության հողերը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման եւ արտադրական նշանակության հողամասերի կատեգորիայի: Հայաստանում ավելի քան 500 տնտեսավարող սուբյեկտ ընդերքօգտագործման արտոնագիր ունի, ընդորում, նրանց մեծ մասը գործում էին ընդերքօգտագործման կատեգորիա չունեցող հողերի վրա: Ներկայումս վարձակալներն աղտոտում են գյուղատնտեսական նշանակության հողերը թափոններով եւ պոչերով, վերածելով դրանք անպետք հողերի, եւ դրա համար որեւէ տուգանք չեն վճարում: Վառ օրինակ է Սոտք համայնքի վարչական տարածքում «GeoProMining Gold» ընկերության գործունեությունը: Ըկերությունը Սոտք համայնքից վարձակալել է ավելի քան 1000 հեկտար հողատարածք եւ օգտագործում է այն որպես հանքարդյունաբերական թափոնների հարթակ: Կառավարության 2011թ. ապրիլի 21-ի 558-Ն որոշումը հակասում է ՀՀ Հողային օրենսգրքի 43-րդ հոդվածին, որը սահմանում է համայնքի ղեկավարի իրավասությունը հողերի օգտագործման եւ

պահպանման նկատմամբ վերահսկողության բնագավառում: Այդպիսով, համայնքը կորցրեց համայնքային հողերը վերահսկելու իր իրավունքները:

ՀՀ կառավարությունը հողերի յուրացման համար հաճախ օգտագործում է «բացառիկ՝ գերակա հանրային շահ» ձեւակերպումը, որն իրականում չի հետապնդում հանրային շահ: Արդյունքում համայնքային, պետական, մասնավոր հողերն անցնում են խոշոր բիզնեսին: Նման որոշումներից է ՀՀ կառավարության 2007թ. նոյեմբերի 1-ի N1279-Ն որոշումը, որի արդյունքում Լոռու մարզի Թեղուտ եւ Շնող համայնքների 81.483 հեկտար հողերի նկատմամբ ճանաչվեց բացառիկ՝ գերակա հանրային շահ՝ Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրը բաց եղանակով շահագործելու համար: Ներկայումս տեղի բնակիչները չեն կարողանում հողագործությամբ եւ անասնապահությամբ զբաղվել գյուղատնտեսական նշանակության հողերի բացակայության պատճառով:

ՀՀ կառավարությունը բացառիկ՝ գերակա հանրային շահ ձեւակերպմամբ մեկ այլ որոշում կայացրեց 2011թ. ապրիլի 28-ին: 627-Ն որոշմամբ (<https://www.e-gov.am/gov-decrees/item/19615/>), Սյունիքի մարզի Քաջարան, Արծվանիկ, Սեւաքար, Աճանան, Չափնի եւ Սյունիք համայնքների, քաղաքացիների եւ իրավաբանական անձանց սեփականությունը հանդիսացող 608 հեկտար հողերի նկատմամբ ճանաչվեց բացառիկ՝ գերակա հանրային շահ, հողերը փոխանցվեցին «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ին՝ Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման ծրագրի եւ բացահանքի ընդլայնման աշխատանքների իրականացման համար: Կառավարության որոշմանը դեմ դուրս եկավ Քաջարան համայնքը, որը պնդում է, որ 627-Ն որոշման իրականացմամբ համայնքը ոչ միայն կզրկվի իր հողերից, այլեւ կտեղահանվի: Քաջարանցիները կառավարությունից պահանջում են չեղյալ ճանաչել որոշումը:

ՀՀ կառավարությունն արագ տեմպերով փոխում է հողերի կատեգորիաները փոքր ՀԷԿ-երի կառուցման համար: Միայն 2012թ. հունվարից մարտ ամիսների ընթացքում ՀՀ կառավարությունն առնվազն 10 փոքր ՀԷԿ-ի կառուցման համար փոխել է գյուղատնտեսական նշանակության հողերի կատեգորիան: Հաշվի չառնելով համայնքների կարիքները եւ նախարարությունների դիտողությունները՝ կառավարությունն հապճեպ որոշումներով փորձում է լրացնել փոքր ՀԷԿ-երի զարգացման սխեման: 2012թ. մարտի 1-ին ՀՀ կառավարությունը հաստատեց

Մյունիքի մարզի Լիճք համայնքի հողերի կատեգորիայի փոփոխման 238-Ն որոշման նախագիծը (<https://www.e-gov.am/gov-decrees/item/21038/>)` հաշվի չառնելով ՀՀ գյուղատնտեսության և բնապահպանության նախարարությունների առարկությունները: ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը նպատակահարմար չէր համարում անտառային հողերի կատեգորիայի փոփոխումը` հաշվի առնելով ՀՀ հողային օրենսգրքի 36-րդ հոդվածի 1-ին կետի պահանջը: Իսկ ՀՀ բնապահպանության նախարարությունը զգուշացնում էր, որ կառուցվող փոքր ՀԷԿ-ի տարածքը գտնվում է նորաստեղծ «Արեւիկ» ազգային պարկ»-ում: Ստացվում է, որ Մեղրի գետի 30կմ երկարությամբ հատվածում կառուցվելու է 9 փոքր ՀԷԿ: Հաշվի առնելով, որ ամեն մի ՓՀԷԿ-ի համար գետի տվյալ հատվածը պետք է պարփակվի մոտ 2-3 կմ երկարությամբ խողովակով, ապա ափամերձ տարածքներն ամբողջությամբ կչորանան: Բացի այդ, նախատեսվում է Ալվանք, Շվանիձոր, Նոնաձոր գյուղերի և Ագարակ քաղաքի համար Մեղրի գետից ոռոգման ջրագիծ կառուցել: Այդ նախաձեռնության դեմ հանդես են եկել մոտ 1000 մեղրեցիներ: Նրանք ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանին և երկրի մյուս բարձրադիր պաշտոնյաններին ուղղված նամակում նշել են, որ շուրջ 160 հա պտղատու այգիներ Մեղրիում և 70 հա Լեկվազ գյուղում, ինչպես նաև 500 քմ-ից մինչև 4000 քմ առանձին հողակտորներ ոռոգվում են Մեղրի գետի ջրով: Այսինքն` շուրջ 1300 հողօգտագործողներ կարող են մնալ առանց ոռոգման ջրի, որը վերցնում են Մեղրի գետից: «Գետի բնական էլքի, նրա իրական հնարավորությունների մասին տվյալները, որոնք ներկայացվել են ծրագրի հաշվարկները հիմնավորելիս, մեղմ ասած, չեն համապատասխանում իրականությանը... Կասկածից վեր է, որ գետի ջրի փոքր քանակն իսկ այլ ուղղությամբ տանելը մեծապես ազդելու է մերձակայքի էկոհամակարգի վրա: Բավական է նշել, որ Մեղրու տարածքում աճող 1468 բուսատեսակից 28-ն էնդեմիկ է և հանրապետության այլ վայրերում ու Հարավային Կովկասում չի հանդիպում, 123 անուն դեղաբույս ունի արդյունաբերական նշանակություն ... կտրուկ կնվազի օդի հարաբերական խոնավությունը, կփոխվի ողջ էկոհամակարգը, որն աղետ կլինի շրջանի բնակչության համար»,- նշված է նամակում:

Նմանատիպ իրավիճակ է նաև Գեղարքունիքի մարզում, որտեղ Գետիկ գետի վրա միմյանցից ընդամենը 500-600մ հեռավորության վրա կառուցվում է 6 փոքր ՀԷԿ:

Արդյունքում մոտ 12 կմ երկարությամբ ավիամերձ հողատարածքները կորցնում են իրենց ջուրը:

Սյունիքի մարզի Ծավ գյուղում երկրորդ փոքր ՀԷԿ-ի կառուցման ընթացքում ոչնչացվել են մեծ քանակությամբ ծառեր ու թփեր, տարածքը դարձել է անօգտագործելի, բնակիչները գրկվել են իրենց հողամասերը ոռոգելու հնարավորությունից:

Արարատյան դաշտ

Հայաստանում գյուղատնտեսական նշանակության հողերի կորուստը պայմանավորված է նաև հողերի աղակալմամբ: Այս երեւույթը հատկապես տարածված է Արարատյան դաշտում՝ Արարատի եւ Արմավիրի մարզերում: Այս մարզերի հողատարածքները հատում են Արաքս գետի ձախափնյա հովիտները, որտեղ զարնան վարարումների ընթացքում գրունտային ջրերը բարձրանում են եւ գերխոնավեցնում հողը, ապա գոլորշիանալով, թողնում են աղը հողի մեջ: Այստեղ շուրջ 30 000 հա գյուղատնտեսական նշանակության հող դուրս է եկել շահագործումից աղակալման հետեւանքով: 600 հազար հա տարածք զբաղեցնող Արարատյան դաշտում աղակալման խնդիրը միշտ էլ եղել է: Այդ նպատակով կառուցվել է արհեստական ջրանցքերի՝ դրենաժային համակարգ, որը հեռացրել է ավելող ջրերը: Սակայն պետական հոգացության բացակայության պատճառով ներկայումս դրենաժները չեն գործում. լցված են հողով, աղբով, մացառներով, եւ Արարատյան դաշտի հողերը ենթարկվել են կրկնակի աղակալման: Հողերի աղակալումն իր հետ բերել է մի շարք լուրջ սոցիալական խնդիրներ: Միայն Արմավիրի մարզում հողագործությամբ ապրող շուրջ 13 համայնքի բնակիչները աղակալման պատճառով չեն կարողանում իրենց սեփական հողը մշակել: Մի մասն իրենց հողերը թողած՝ հարեւան համայնքներից են հողեր վարձակալում մշակելու համար, մյուսներն էլ սպասում են, թե երբ են դրենաժները մաքրելու, իրենց հողերը լվացվելու, որ կարողանան մշակել:

Աղակալման դեմ պայքարում ՀՀ կառավարությունը մեծ գումարներ պետք է ծախսի, քանի որ միայն դրենաժները մաքրելը դեռ բավական չեն հողերի աղակալման հարցը լուծելու համար: Մասնագետների գնահատականների համաձայն՝ Արմավիրի

մարզում հարկավոր է նոր ջրանցք կառուցել, քանի որ հինը սխալ է կառուցված, ավելին, մնացել է անավարտ: Արարատյան դաշտում ջրանցքների նորոգումը, դրենաժների մաքրումն իրականացվում էր Հազարամյակի մարտահրավերներ ծրագրով, որը տեւեց 2009-ից մինչև 2011 թվականը: 2012-ից ֆինասավորումը դադարեցվեց, եւ այդ խնդիրները ծանրացան կառավարության ուսերին: «Արմավիրի մարզի 2011-2014թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի իրականացման 2012թ. տարեկան աշխատանքային պլան»-ում նշված է, որ Արմավիրի 5000 հա աղակալված հողերի աղազերծման համար անհրաժեշտ է 6 միլիոն դրամ, սակայն, ոչ պետական բյուջեից, ոչ որեւէ այլ աղբյուրից ոչ մի լումա չի հատկացվել խնդրի կարգավորման համար:

«Արարատի մարզի 2011-2014թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի իրականացման 2012թ. տարեկան աշխատանքային պլան»-ի համաձայն՝ պետբյուջեից 84 միլիոն դրամ է նախատեսված մարզում աղակալման, ճահճակալման, անապատացման դեմ պայքարելու եւ 15 համայնքներում 58 կմ երկարությամբ դրենաժների մաքրման աշխատանքներ իրականացնելու համար, որպեսզի հողերը կրկին գյուղատնտեսական շրջանառության մեջ դրվեն: Պարզ չէ, թե Արարատի մարզպետարանը որքանով կիրականացնի նախորոշված ծրագիրը: Ապրիլ ամսին լինելով մարզի Արարատ համայնքում, որտեղ հողերը ենթարկվել են կրկնակի աղակալման, մենք հողերի լվացման որեւէ աշխատանք չտեսանք: Ավելին, ինչպես ցույց տվեցին մեր ուսումնասիրությունները, Արարատի մարզի 2011թ. զարգացման ծրագրի աշխատանքային պլանում նախատեսված են եղել գործողություններ, որոնք կրկնվել են 2012թ. աշխատանքային պլանում եւս, բայց դեռեւս չեն իրականացվել:

Հողերի աղակալման դեմ պայքարի համար 2012թ. ապրիլի 19-ին ՀՀ կառավարությունը որոշում կայացրեց ընդամենը մի քանի օրով՝ մինչև մայիսի 1-ը, «Սեւան-Հրազդանյան ջրառ», «Դեբեդ-Աղստե-ջրառ» եւ «Ախուրյան-Արաքս-ջրառ» ՓԲԸ-ներին թույլատրել ոռոգելի աղակալած հողերի լվացման եւ խոնավալիցք հաղորդելու համար բացառապես ինքնահոս եղանակով հաշվառված ոռոգման ջուրը մատակարարել առանց շահույթ ձեւավորելու:

Ունենալով հարուստ ստորգետնյա ջրային պաշարներ՝ այսօր Արարատյան դաշտի գյուղերում ջրի խնդիր կա: Պատճառը ձկնաբուծարաններն են: Ըստ պաշտոնական տվյալների՝ միայն Արմավիրի մարզում կա 147 ձկնաբուծարան, իսկ Արարատում՝ 87 ձկնաբուծարան: Ձկնաբուծական տնտեսությունները տարեկան 800 մլն խմ ջուր են արդյունահանում: Արդյունքում գյուղերը մնում են առանց ջուր, իսկ հողերն՝ անմշակ: Նման գյուղերից է Արարատի մարզի Հայանիստ գյուղը, որտեղ գյուղացիները ջրի բացակայության պատճառով չեն կարողանում մշակել նույնիսկ իրենց տնամերձ հողատարածքները:

Արարատում հողերն անմշակ են մնում նաև բարձր վարձերի պատճառով: Սոցիալական ծանր պայմաններում ապրող գյուղացիները չեն կարողանում վճարել հողերի վարելու, ջրելու վարձերը: Արարատում մի հեկտար հող վարելն արժե 100 հազար դրամ:

Արարատյան դաշտին սպառնացող լուրջ վտանգներից են Արմավիրի մարզում՝ Մեծամորում, գտնվող Հայկական ատոմային էլեկտրակայանի ռադիոակտիվ թափոնները: Այդ թափոնները թաղվում են ՀԱԷԿ-ի տարածքում: Ըստ երկրաբանական գիտությունների թեկնածու Ռուբեն Յադոյանի՝ ստորգետնյա ջրերն անցնում են ՀԱԷԿ-ի տարածքի տակով եւ բեկվածքներով հոսում են Արարատյան դաշտ: Չնհալի հետեւանքով նրանց մակարդակը բարձրանում է եւ հետո իջնում: Մակարդակի բարձր լինելու դեպքում մեծանում է նաև ռադիոակտիվ աղտոտման ռիսկը: Սառեցման համակարգում ջուրն անցնում է խողովակաշարով ռեակտորի միջով եւ ապա լցվում ջրահավաք ավազան: Եթե վրթար լինի, ապա ջրահավաք ավազանից ջուրը կգնա Արարատյան դաշտ:

Հողերի աղտոտում հանքարդյունաբերական թափոններով

Հանքարդյունաբերական թափոններով բերրի հողերի աղտոտումը Հայաստանի ամենացավոտ խնդիրներից է, քանի որ ծանր մետաղներով եւ տոքսիկ մետաղներով հողերի աղտոտման հետեւանքները հնարավոր չէ վերացնել: ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի՝ Քաջարանում, Կապանում, Ալավերդիում, Ախթալայում եւ նրանց շրջակա համայնքներում կատարած ուսումնասիրությունների արդյունքների համաձայն՝ հողերը, հետեւաբար եւ

գյուղմթերքն աղտոտված են ծանր եւ տոքսիկ մետաղներով: Հանքարդյունաբերական օբյեկտների հարեւանությամբ գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերն աղտոտվում են հանքային փոշու տարածման, ստորգետնյա եւ մակերեսային ջրերի՝ գետերի շնորհիվ, հողերի վրա լցվում են փոշիացված դատարկ ապարներ, որոնք պարունակում են ծանր մետաղներ եւ վտանգավոր քիմիական նյութեր: Հողերն աղտոտվում են նաեւ հանքարդյունաբերական օբյեկտների արտահոսքերով: Օրինակ՝ Սյունիքի մարզում գտնվող Ագարակի պղնձամուլիբդենային կոմբինատի արտահոսքերը լցվում են Արաքս գետ, որտեղից պոմպերով ջուրը մատակարարվում է Մեղրի, Շվանիձոր եւ այլ համայնքեր ոռոգման նպատակով: Արդյունքում բերքատու այգիները եւ բանջարանոցները չորանում են:

Ալավերդու պղնձաձուլարանի 3կմ շառավիղով տարածքում հողերն աղտոտված են ծանր մետաղներով, որոնց պարունակությունը 20-40 անգամ գերազանցում է սահմանային թույլատրելի կոնցենտրացիան: Աղտոտող մետաղներից պղնինձը գերազանցում ՄԹԿ-ն 32.3 անգամ, կապարը՝ 16.0 անգամ: Հողերը վարակված են նաեւ այլ քիմիական տարրերով (Hg, As, Mo, Ni, Cd, Cr եւ այլն): Այս հողերն ունեն չափավոր-վտանգավոր կատեգորիա («Գեո Ալավերդի շրջակա միջավայրի եւ քաղաքային զարգացումը», 2009թ.):

Պետական քաղաքականությունը, ինչպես երեւում է կառավարության ընդունած որոշումներից, հանգեցնում է բերրի հողերի կրճատմանը: Այդպիսի որոշումները կյանքի են կոչվում ակնթարթորեն: Սակայն հողերի պահպանությանը վերաբերող որոշումները, օրինակ՝ կառավարության 2011թ. սեպտեմբերի 8-ի 1396-Ն որոշումը, (<https://www.e-gov.am/gov-decrees/item/20289/>), ըստ որի՝ հաստատվել է հողի բերրի շերտի օգտագործման կարգը եւ հաշվառման ձեւը, ձեւական բնույթ է կրում. կառուցապատման ժամանակ, հանքարդյունաբերական աշխատանքների ընթացքում չի պահպանվում հողի բերրի շերտը, աշխատանքներ չեն տարվում քայքայված տարածքների վերականգնման ուղղությամբ:

Անհրաժեշտ է

- այս ոլորտում փոխել ողջ պետական քաղաքականությունը
- բարելավել օրենսդրական դաշտը՝ մասնավորապես մշակել նոր «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգիրք եւ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ նոր օրենք

- հաշվի առնելով, որ Հայաստանի տարածքի 81%-ը ենթակա է անապատացման՝ կատարել ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի» կոնվենցիայով, ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայով նախատեսված պարտավորությունները
- դադարեցնել գյուղատնտեսական նշանակության հողերի կատեգորիաների փոփոխումը
- մշակել եւ իրականացնել քայքայված հողերի վերականգնման ծրագրեր
- փոխել գյուղատնտեսական քաղաքականությունը՝ աջակցելով գյուղացիներին, որպեսզի նրանք զբաղվեն օրգանական գյուղատնտեսությամբ:

Ըստ պաշտոնական տեղեկատվության՝ Հայաստանի ընդհանուր տարածքի 46,6%-ն է գյուղատնտեսական նպատակներով օգտագործման ենթակա, ընդ որում, այդ տարածքի 75%-ը ծովի մակերեւոյթից ավելի քան 1500մ բարձրություն ունի, ինչը դժվարացնում է գյուղատնտեսական աշխատանքները: Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական ընդհանուր հողերը կազմում են 1391.8 հազար հեկտար: Բնակչության մեկ շնչի հաշվով գյուղատնտեսական հողերը կազմում են 0.65 հեկտար, իսկ վարելահողերը՝ ընդամենը 0.14 հեկտար: